ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ.Հ Արագածոտնի մարզ գ.Ղազարավան հեռ.(094)245050

Նո 6
01-02- 2020թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն՝ Դ. Գևորգյանին

Կից ներկայացնում ենք Արագածոտնի մարզի Ղազարավանի գյուղական համայնքի ավագանու 2020թ.–ի հունվարի 29-ի նո 10, 11, 12, 13 որոշումները:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հանրային ծառայության ընդհանուր բաժին
Ելք
«1» 02 2020թ.
Մուտք № 00802-20

Ղազարավանի գյուղական համայնքի
ղեկավար Հ. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արագածոտնի մարզ
Գ. Ղազարավան

ՈՐՈՇՈՒՄ

29-ը հունվարի 2020թ. N 10

ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Ղազարավան համայնքի ավագանին .

Որոշեց՝

Հաստատել Ղազարավանի գյուղական համայնքի 2020 թվականի հունվարի 24-ի ավագ օրակարգը՝

1. Ղազարավան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 15-ի << Ղազարավան գյուղական համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը 2020 թ. սահմանելու մասին >> թիվ 2 և <<Ղազարավան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 15-ի Ղազարավան համայնքի ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը 2020թ. հաստատելու մասին >> թիվ 3 որոշումները անվավեր ճանաչելու մասին:
2. Ղազարավան գյուղական համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Ղազարավան համայնքի ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը 2020թ. հաստատելու մասին:

Կողմ – 4 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ա. Հովսեփյան

Ա. Խաչատրյան

Ս. Նազարյան

Գ.Հարությունյան

Ղազարավան համայնքի ղեկավար՝ Հ. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արագածոտնի մարզ
Գ. Ղազարավան

ՈՐՈՇՈՒՄ

29-ը հունվարի 2020թ. N11

ՂԱԶԱՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի <<ՂԱԶԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ Ե ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 2 ԵՎ <<ՂԱԶԱՐԱՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ 2020 ԹՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >>ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով ավագանին .

Որոշեց՝

Անվավեր ճանաչել Ղազարավան համայնք ավագանու 2020 թվականի հունվարի 15-ի <<Ղազարավան գյուղական համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 2 և <<Ղազարավան գյուղական համայնքի ղեկավա աշխատավարձի դրույքաչափը 2020 թվականին հաստատելու մասին>> թիվ 3 որոշումները:

Կողմ – 4 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ա. Հովսեփյան

Ա. Խաչատրյան

Ս. Նազարյան

Գ.Հարությունյան

ՂԱԶԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արագածոտնի մարզ
Գ. Ղազարավան

ՈՐՈՇՈՒՄ

29-ը հունվարի 2020թ. N 12

ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Ղազարավան համայնքի ավագանին

Որոշեց՝

Սահմանել Ղազարավանի համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տարեկան տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ – 4 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ա. Հովսեփյան

Ա. Խաչատրյան

Ս. Նազարյան

Գ.Հարությունյան

Ղազարավան համայնքի ղեկավար՝ Հ. Ասատրյան

ՀԱՎԵԼ
ՀՀ Արագածոտնի մարզի Ղազարա
համայնքի ավագ
2020թ հունվարի 29-ի N 12 որոշ

ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների ոչ հիմնական շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝

ա) Հիմնական շենքերի և շինությունների համար ՝
մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական տների, ինչպես նաև մինև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար ՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ:

բ). ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ 3000(երեք հազար)

-20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 (հինգ հազար)

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5.000(հինգ հազար) դրամ:

3. ա) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար ՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 (մեկ հազար) դրամ:
բ) Համայնքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 (երկու հազար) դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է ՝
ա) հիմնական շինությունների ներսում ՝
- 50-ից մինչև 100 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 10000(տաս հազար) դրամ:

Ղազարավան համայնքի ղեկավար ՝ Հ. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արագածոտնի մարզ
Գ. Ղազարավան

ՈՐՈՇՈՒՄ

29-ը հունվարի 2020թ. N 13

ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Ղազարավան համայնքի ավագանին

Որոշեց՝

Հաստատել Ղազարավանի գյուղական համայնքի ղեկավարի 2020թ. աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական՝ 216.000 (երկու հարյուր տասնվեց հազար) դրամ:

Կողմ – 4 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ա. Հովսեփյան

Ա. Խաչատրյան

Ս. Նազարյան

Գ.Հարությունյան

Ղազարավան համայնքի ղեկավար՝ Հ. Ասատրյան